

Թեան համար ընդունած են գովութեան տումակներ; որոց վրայ յետոյ կխօսիմք: Այս տուգանքը վճարելն ալ շատ զօրաւոր պատիժ է, մանաւանդ խելօք տղայոց:

Երրորդ տեսակ անվնաս՝ բայց վերջին աստիճանի ծանր պատիժն է՝ յանցաւորին անունը գպրատան պատը կախուած սեւ տախտակին վրայ գրել այսքան օրուան համար, որ եկողները տեսնեն. եւ թէ որ շատ ծանր յանցանքի պատճառաւ է՝ եռամսեայ վկայականին մէջ ալ անցընել:

Թող չըսէ մէկը թէ արեւելցի տղայք եւրոպացւոց չեն նմանիր, ուստի այդպիսի բաները նոցա համար պատիժ չեն. նոցա կնյ մի ճեծ, կնյ մի գաւազան. կնյ մի փալախ, ան նայինք: — Այնպէս չէ. տղայն ամէն տեղ՝ ամէն ժամանակ տղայ է, եւ իրեն պատին ու անարդանքը, պարծանքն ու ամօթը շատ աղէկ կճանչնայ. ուստի սրչտի ալ խստերախ կարծուի արեւելցի տղայն, եւրոպացիէն պակաս զգայուն չէ այն պատիժներուն՝ որ իրեն ամօթ ու նախատինք կբերեն. բոլոր գեթուարութիւնը այնպիսի վարժապետ գանելն է՝ որ կամք եւ կարողութիւն ունենայ տղայոց օգտակար պատիժներ տալու, նոցա այն անմեղ հասակը կրթելու մտքով, եւ ոչ թէ իւր գազանական բարկութիւնը կըշտացընելու ջանքով:

Կարելի է նաեւ քանի մը ուրիշ տեսակ պատիժներ բանեցընել որ նոյնպէս աւելի բարոյական խրատ կհամարուին՝ քան թէ մարմնոյ չարչարանք. եւ թէ որ խոհեմութեամբ գործածուին, շատ օգուտ կընեն տղայոց: Օրինակի համար, որոշուած ժամա-

նակէն ուշ դպրոց եկող տղան կարելի է չոքեցընել սահմանեալ տեղ մը այսքան ատեն, կամ մինչեւ որ անկից աւելի ուշ եկող մը հասնի, ունա բռնէ տեղը: — Դասաւարթեան ժամանակ մտադրութիւն չընող տղայն կարելի է առաջին անգամուն ոտքի վրայ կեցընել քիչ մը ատեն. երկրորդին չոքեցընել, երրորդին գրաւոր ազաշխարանք դրնել: Դասը չգիտցող տղայէն կարելի է պահանջել որ երկրորդ օրը ոչ միայն ջրի պէս գիտնայ, այլ եւ տունը թղթի վրայ օրինակէ զայն ու բերէ:

Ասոնք եւ սոցա նման պատիժներ տալու ատեն՝ վարժապետը պիտի չմոռանայ որ ամէն տղայ մէկ բնութեան տէր չէ, ուստի եւ մէկ տեսակ պատժով պիտի չպատժուի, թէպէտ եւ նոյն յանցանքը գործած լինի:

Ընդհանրապէս զգուշանալու է պատժելէն վախկոտ ու վատառողջ տղայքը. այնպիսիներուն արդէն բաւական խրատ է ուրիշներուն պատժուածը տեսնելը: — Նոյնպէս պէտք չէ ծանր պատիժներ տալ այն տղայոց որ ստատիկ կրակոտ ու թեթեւ են բնութեամբ, եւ նոցա որ դեռ նոր սկսեր են դըպրատուն գալ. այսպիսիները աւելի կշահուին խրատով կամ թեթեւ յանդիմանութեամբ մը: — Իսկ այն տղան որ յամառ ու կամակոր, ծածկագործ ու ստախօս, չար ու կեղծաւոր, կռուասէր ու ամբաստանող, ծոյլ ու չար օրինակ տուող են, պէտք է անպատճառ խրատել ու պատժել, մինչեւ որ իրենք զիրենք ժողվրտեն:

Ուրիշ յօգուածով մը կխօսիմք տղայոց ընելու վարձատրութեանց վրայ:

Ա Ռ Ա Կ

Ա Ղ Ո Ի Է Ս Ե Ի Կ Ո Ի Զ. (8)

«Աղուէս տղբար, սէր բարով: սէր կըվազես բարեկամ, Ի՞նչ ունիս որ մեր երեսն ալ չես նայիր այս անգամ»

Հարցուց կուզը աղուխաւն: —

«Ա՛հ բարեկամ սիրասուն,

Ըսաւ աղուէսը կուզին.

Մի հարցընէր բընաւին.

(8) 85. Սամսոբ:

Վերջապէս զիս ալ մասնեցին  
 Զըրպարտութեան կրրակին .  
 Սա ալ կաշառք կուտէ ըսին  
 Ու ելան զիս քըշեցին :  
 Գիտես աղբարիկ, ես հաւնոցին մէջ դատարար էի .  
 Գիշեր ու ցորեկ դառն աշխատանքէ աչք չէր բանայի .  
 Առողջութիւնըս գընաց ,  
 Հանգըստութիւնս չըմընաց ,  
 Կերած հացըս վար չէր երթար ,  
 Գիշերներն աչքըս քուն չըկար .  
 Այսքան տառապանք քաշեմ չարչարութիմ  
 Ու յետոյ ելնեմ այսպէս զըրպարտութիմ .  
 Ահ դուն ինքըդ, գընա եղբայր մըտմըտա ,  
 Զըրպարտութեան ազատութիւն մէկն որ տայ ,  
 Մէկ արդար մ'ալ աշխարհիս մէջ կըմընայ :  
 Ծօ, ես կաշառք մի ուտեմ ,  
 Միթէ խեղճըս թուուցեր եմ :  
 Ա'խ աղբարիկ, խըղճմըտանքով դո՛ւն ըսէ ,  
 Տեսած ունիս այս մեղքին տէր եղածըս ,  
 Մէկէն մէկալէն կաշառք առածըս .  
 Տեսեր ես նէ՛ լաւ միտքըդ բեր ու զուրցէ :  
 — Զէ՛ բարեկամ, շիտակն ըսեմ .  
 Քանի մ'անգամ դունչըդ փետուր տեսեր եմ : —

Մարդ կայ որ ձեռքը գործ ունի՛ տեղ ունի ,  
 Բայց օրերը ախով վախով կանցընէ .  
 Իբր թէ խեղճ է՛ ապրուստի փող չունի ,  
 Օրուան հացը չիյտէ թէ ինչպէս ճարէ :  
 Իրաւընէ  
 Բոլոր քաղաքը Գիտէ  
 Որ նորա վըրան գըլուխը չըկայ ,  
 Կընկանը հագուստն ալ անոր կօրս .  
 Մէյմ՛ ալ նայիս կամաց կամաց  
 Տունիկ մըն է կըշինէ ,  
 Գեղիկ մըն է կըգընէ :  
 Իրս ու մատրափ գիմացէ գիմաց  
 Գիբ ու կըտեսնես՝ ծայրը չես գըտներ .  
 Բայց խըղճմըտանք ալ չես ըներ  
 Եթէ մտքէդ անցնի, եւ կամ զըրուցես  
 Թէ նորա դունչը դուն փետուր տեսեր ես :